

# ՍԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

### Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: **Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:**

Մաղթում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1

### Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում թ.

- 1) այլ-նտրանք, հյուր-նկալ, հոտ-նկայս, զահ-նկեց
- 2) առ-նթեր, ակ-նբախ, ան-նղիատ, զիրկ-նղիառն
- 3) դյուր-մբոնելի, ճեպ-նթաց, ան-նտել, վերջ-նթեր
- 4) առ-նչվել, ան-նթեռնելի, խոչ-նղոտ, ինքն-ստիճանքյան

2

### Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում ռ.

- 1) սարսու-, ու-ճանալ, ու-կան, կե-ռն
- 2) բարբա-, մատ-վակ, ոսկո-, ա-վույտ
- 3) ա-ժնորել, կ-ճիկ, կա-ուսել, հ-չակ
- 4) պա-կել, հու-թի, կարկա-ել, արբշի-

3

Ո՞ր տառը տեղադրելու դեպքում բառի դիմաց գրված բացատրությունը ճիշտ կլինի.  
լուծման տարրերակներից ո՞րն է ճիշտ.

- ա. *շաղա-* (1. **փ**, 2. **իւ**) – գայլիկոն  
բ. *նշ-ար* (1. **իւ**, 2. **տ**) – վիրաբուժական դանակ  
գ. *նախ-իր* (1. **դ**, 2. **օ**) – կոտորած  
դ. *մույ-* (1. **թ**, 2. **կ**) – հենասյուն

- 1) ա-2, թ-1, դ-2, դ-2
- 2) ա-1, թ-2, դ-1, դ-2
- 3) ա-1, թ-2, դ-2, դ-1
- 4) ա-1, թ-1, դ-1, դ-2

4

### Տրված բառերից քանի՞ն են բառավանկ.

Խաչիամբույր, անէական, լեռնարնակ, պարուսույց, հետաքրքրական, քննաշրջան,  
սմահավատ, աստղագետ, մրցաշրջան, խնդրահարույց:

- 1) յոթը
- 2) ութը
- 3) հինգը
- 4) վեցը

5

### Ո՞ր շաբքի ոչ բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) ընձեռել - տրամադրել, մոմուալ - կսկծալ, արտասվել - հեկեկալ, ադամանդ - շողակն
- 2) լայնախոհ - լայնահորիզոն, լախտ - մտրակ, զուղձ - հողակոշտ, մակույկ - նավակ
- 3) թեզանիք - թևք, քողարկել - պարտակել, թափրփված - խառնափնիքոր,  
բուրյան - հոտավետ
- 4) շրջնոլիկ - թափառական, ընչացք - բեղ, բամբասանք - ասեկոսե, ընտրող - քվեարկող

6

Ո՞ր շաբքի բոլոր բառագույզերն են կազմված հականիշներից:

- 1) կշտամբել - գանահարել, իրագել - անտեղյակ, բացասում - հաստատում
- 2) խոչընդոտել - նպաստել, ստերջ - անջրդի, հուսահատվել - գոտեպնդվել
- 3) շաղակրաս - քշախոս, գժուված - համերաշխ, կայտառ - շենշող
- 4) աղտեղություն - մաքրություն, սեղմ - ճապաղ, հեղիեղուկ - անհողողոդ

7

Ո՞ր տարրերակում է համանուն բառերից մեկը սխալ բացատրված:

- 1) **կողակից** - ամուսին, **կողակից** - կողակ ձկից
- 2) **հորդ** - տեղատարափ, **հորդ** - քո հոր
- 3) **մատյան** - գիրք, **մատյան** (գունդ) - հեծելազոր
- 4) **մեկնել** - մեկնաբանել, **մեկնել** - կարկամել

8

Ո՞ր շաբքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:

- 1) ուղղարիո, վիրակապ, ավարառու, էջանիշ
- 2) անվանացանկ, զորահավաք, հովասուն, քննախույզ
- 3) նրբարիմք, ուամկավար, առատաձեռն, կատվառյուծ
- 4) ամրոցամերձ, շողարձակ, կրափոշի, կարգազանց

9

Ո՞ր շաբքի բոլոր բառերի հոգմակի թիվն է կազմում **-մեր** վերջավորությամբ:

- 1) չափահաս, վառելանյութ, ծխամորճ, ձրիակեր
- 2) երկմաքեր, սևամորթ, մետսաձիգ, քարտաշ
- 3) հայագետ, գործազուրկ, մարդասեր, ծաղկաթերք
- 4) սերմնացան, զորամաս, անասնապահ, հրձիգ

10

Ո՞ր շաբքի բոլոր բառերն են ենթարկվում **ու** հոլովման:

- 1) այգի, երեխա, օղի, կաղին
- 2) կիրակի, ամուսին, աղախին, բարդի
- 3) պատանի, որդի, պապ, գարի
- 4) անկողին, գինի, լուցկի, վազել

11

Ըղճական եղանակի քանի՞ բայաձև կա տրված հատվածում:

*Իմ գերեզմանիմ դուք չմոտենաք,  
Թողեք, որ հանգչի իմ սիրտը հոգմած,  
Թողեք, որ լինեմ հեռավոր, մենակ,  
Չզգամ, որ կա սեր, և՝ ցնորք, և՝ լաց...*

- 1) հինգ
- 2) վեց
- 3) երկու
- 4) չորս

12

## Ո՞ր նախադասության մեջ կապ չկա:

- 1) Նա իսկույն բաժանվեց ինձնից այնքան ուրախ ու հաճատացած, որ կարծես այլև ոչ մի դժբախտություն չէր անհանգստացնում իրեն:
- 2) Նա, ըստ այդ որոշման, պետք է հանդիպեր նրան որևէ չեզոք տեղում և հասցներ ազարակ:
- 3) Բայց սովորաբար նա ինձ մոտ է գիշերում. այս երեկոն եքն վաղ գա, հենց այս գիշերվա զնացքով կճանապարհեմ:
- 4) Չիմացա՝ ինչպես ճաշեցի, որովհետև ինձ շատ էր հետաքրքրում այն տեսակ–ցությունը, որ պիտի ունենայի Սառայի հետ:

13

## Ո՞ր նախադասության մեջ չեզոք սերի բայ չկա:

- 1) Եվ ես, որ երբեք չեմ իմացել սենտիմենտալություն, ուզեցի հրացանս առնել և հենց նրա աչքի առջև փշրել այն:
- 2) Նա փախավ մի քանի քայլ հեռու, կուշ եկավ մի ծառի տակ և գիրքը թեի տակ առավ:
- 3) Զարմացած նայեցի նրա դեմքին. այդ դեմքն արտահայտում էր միաժամանակ և զայրույթ, և պաղատանք:
- 4) Ուղեկցուիիս շատ էր տիսրել և այլս բոլորովին չէր խոսում:

14

## Ո՞րը անդեմ նախադասություն չէ:

- 1) Չսիրել, չտենչալ, չկանչել ...
- 2) Երկրաշարժից փլատակված քաղաք. անմեղ զոհեր:
- 3) Նորից անձրևում է տիսուր, միապաղադ:
- 4) - Ողջո՞ւյն քեզ, պայքա՞ր, կյա՞նք ու տառապա՞նք:

15

## Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Ազատ ժամանակ նրա իմնական զբաղմունքը ընթերցելն է:
- 2) Նա վայր դրեց երեխային և հյուրերի հետ դուրս եկավ՝ վանքի բաժինները տեսնելու:
- 3) Ժողովուրդը հեքիաթների մեջ է արտահայտում իր իղձերը:
- 4) Շատ մի խորացիր անորոշության լարիրինքոսում:


16

## Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ներգրրծող անուղղակի խնդիր:

- 1) Տեսնելով կրկեսում վալս պարող այդ ձիուն, ես զգացի, որ ինձ համար թանկ է բենաձին, որ մշտապես քրքրվում է բռներից:
- 2) Ես ինձնից զոհ եմ, որովհետև ահա երեկվա զյուղացի՝ իիմա լրիվ ազատված եմ հովիվ դառնալու և հողացավից նվալու վտանգից:
- 3) Փոքրիկը վախից գունատվել էր ու ամբողջ մարմնով դողում էր:
- 4) Ի՞նչ է պահանջվում զյուղի դեկավարությունից, պահանջվում է, որ թույլ տան ձի պահել:

17

**Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



- 1) Խճուղու մի քանի կեռմաններ անցնելուց հետո հորիզոնը դարձյալ փակեցին նոր, կանաչ սարալանջեր, որոնք, հետզինետե դեպի վեր բարձրանալով, ձգվում, հասնում էին մինչև հեռվում երևացող սարերը:
- 2) Պատվիրելով, որ ուտելիքի կապոցը տանեն դեպի կայարան, ինքը ևս իր քայլերն ուղղեց դեպի այն մենավոր տունը՝ հովանավոր պատշգամբ և շուրջը ծառերի ստվեր ունեցող:
- 3) Տիրացուի կարծ ու գիրուկ մարմինը, որ նատած լինելու պատճառով կորացել էր, նմանվում էր մի տՃն կիսագնդի, որի վրա գլուխը շարժվում էր կարծես առանց պարանոցի:
- 4) Պետրոսը, ուշիուշով նայելով ուղեկցին, զգաց այնպիսի մի անհանգստություն, որ պաշարում է մարդուն զգալուց առաջ:

18

**Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Լուսնի խավարումը համընկավ այդ ահեղ ճակատամարտի սկսվելուն:
- 2) Այդ մարդաշատ քաղաքում ես ոչ միայն ծանոթացա իմ կյանքի ընկերոց հետ, այլև հաղորդակից եղանական նրա դարավոր մշակույթին:
- 3) Դանդաղ մոտեցավ խմբին և սկսեց խոսել Աստծուց ու աստվածայինից:
- 4) Ես երախտապարտ եմ Ձեզնից այդպիսի օգնության համար:

19

**Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:**

*Սի օր նա Ծիրվանգաղեին ասաց, որ այդ տղերքը շատ են դեսուդեն վազում, բայց ինքը չի կարծում, թե նրանք կարող են լուրջ գործ սկսել:*

- 1) Սի օր նա Ծիրվանգաղեին ասաց.  
- Այդ տղերքը շատ են դեսուդեն վազում, բայց ես չեմ կարծում, թե նրանք կարող են որևէ լուրջ գործ սկսել:
- 2) Սի օր նա Ծիրվանգաղեին ասաց.  
- Այդ տղերքը շատ են դեսուդեն վազում, բայց ես չեմ կարծում, թե նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել:
- 3) Սի օր նա Ծիրվանգաղեին ասաց.  
- Այդ տղերքը շատ են դեսուդեն վազում, բայց ինքը չի կարծում, թե նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել:
- 4) Սի օր նա Ծիրվանգաղեին ասաց.  
- Այդ տղերքը շատ են դեսուդեն վազում, բայց դու չես կարծում, թե նրանք կարողանան որևէ լուրջ գործ սկսել:

20

Ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Վարդանը մեկիկ-մեկիկ հիշում էր այդ ամենը կանանց հյուրասիրությունը գեղջուկների պարզ զրույցը գիշերային աստղալի երկինքը:
- 2) Վարդանի հիշողությունը չխարեց նրան զյուղը է այնտեղ լիներ որտեղից նշանարվում էին լույսի նշույներ:
- 3) Մենյակի մեջտեղում կանգնել էր ուրիշ մարդ նրա աչքը ծաղկամանի վրա չէր ոչ ել միտքը ծաղկած ծիրաննենիների փողոցում:
- 4) Այդ գովելի պատմությունը տպագրվեց ցանկալի է որ այդպիսիք և դրա նմանները շատանային և ընդօրինակվեին հայ ազգի մեջ:

21

Խաչատոր Արովյանի «Վերք Հայաստանի» վեպից ո՞ւմ խոսքն է ներկայացված տրված հատվածում:

«Ես ի՞նչ գիտեմ՝ տերտերն ի՞նչ ա, ժամն՝ ինչ: Էղաբես քաները էս հաստ զլխումը, հազար տարի էլ ասեմ, մեռնիմ, կտրիմ, ոտներս քարեքար տամ, տուն չի՝ զնալ, տոնն: Պարտականը նա ըլի, որ ինձ կարդալ չի սովորցրել, ամա քանը մենակ կարդալումը չի: Ինչ կուզե ասեն, ես իմ կուզիտ զլխովը էնաբես եմ կարծում. միախ տեղը՝ դատած մաղը ուտիլը ու դարտակ քնիլը հարամ ա: Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերած ծըլիալ ըլի:»

- 1) տաճուտեր Օհաննեսի
- 2) Մուսայի
- 3) գյուղացի Հարությունի
- 4) Աղասու

22

«Սասունցի Դավիթ» էպոսում ինչո՞ւ է Դավթի ձեռքի Խաչ պատերազմին սկանում:

- 1) Հովհաններին խոստացել էր վաճքից հարիսա բերել, բայց 40 ավազակների դեմ կովի մեջ մտնելով՝ մոռացել էր:
- 2) Երդվել էր մարտի ելնել Պղնձե քաղաքի թագավորի թշնամիների դեմ և ազատել նրան հարկից, բայց խոստումը դրժել էր:
- 3) Խոստացել էր փակլեաններին ամուսնացնելուց հետո շտապ դառնալ Խանդութի ու զավակի մոտ և ուշացել էր:
- 4) Երդվել էր յոթ օրից վերադառնալ Զմշկիկ Սուլթանի մոտ, որ կովեն, և մոռացության էր տվել:

23

Պետրոս Դուրյանի «Խմ ցավը» բանաստեղծության տողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ տողերի հաջորդականությունը:

1. Գրկե՛լ սա ցուրտ հողակույտը
2. Դեռ չը գրկած էակ – փունջ մը
3. Ժըպտե, գեղե, հուրե շաղյալ
4. Ո՞հ չէ՛ այնչափ ցավ ինձ համար

- 1) 3, 2, 1, 4
- 2) 1, 2, 3, 4
- 3) 2, 3, 4, 1
- 4) 2, 3, 1, 4

24

Տրված հատվածներից ո՞րը Ավետիք Իսահակյանի որ ստեղծագործությունից է։ լուծման տարրերակներից ո՞րն է ճիշտ։

1. Տիեզերական հազարահանդես դու մեծ խրախճանք, բարի՝ արեգակ։ Ահա իմ հոգին՝ մի ծարավ բողոք, բափի՛ր նրա մեջ գինիդ անապակ։
  2. Տեսան շրեղ մեր ապագան, անընկճելի ազատ ոգին, Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացրած Թուր-Կայծակին։
  3. Այդ հողն է նրան ծնելու սնել, Իր մայրն ու հայրը այդ հողն են դառել։
  4. Դու պիտի հնչե՛ս, հնչես հաղթակա՛ն, Իմ հի՛ն հայ լեզու՝ քա՛ղցր ու սրտարո՛ւխ։
- ա. «Մեր պատմիչները և մեր գուսանները»  
բ. «Հայրենիքիս»  
գ. «Արու-Լալա Մահարի»  
դ. «Հայրենի հողը»
- 1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
  - 2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
  - 3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
  - 4) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա

25

Ո՞ր պնդումն է սխալ Սիսաք Մեծարենցի ստեղծագործության վերաբերյալ։

- 1) Գյուղի թեմայով գրված բանաստեղծություններում Մեծարենցը արտացոլում է գեղջուկի սոցիալական կյանքի ծանր պայմանները։
- 2) «Նավակները» բանաստեղծության մեջ Մեծարենցը ներկայացնում է մարդկային անկատար իղձերի ու սպասման տրամադրությունները։
- 3) «Հյուղը» բանաստեղծությունը տոգորված է անանձնական սիրո տրամադրություններով։
- 4) Մեծարենցը աստվածացնում է բնությունը, նրա շարժման յուրաքանչյուր ակնթարքի մեջ զգում Աստծու շունչը։

26

Տողերի դասավորության ո՞ր տարրերակն է ճիշտ։

- ա. Հույսը հատավ... Ու լաց եղավ  
բ. Տխուր աղջիկն արքայի  
գ. Որ լիճ կապեց արտասուրը  
դ. Ծածկեց քաղաքն ու ամրոց  
ե. Ճամփաներին ամայի  
գ. Նայե՞ց, նայե՞ց սարերն ի վեր  
է. Էսպես անցան շատ տարիներ  
ը. Էնքա՞ն արավ լաց ու կոծ
- 1) է, բ, գ, ե, ա, ը, զ, դ
  - 2) ա, բ, զ, է, ը, դ, զ, ե
  - 3) ա, զ, բ, զ, դ, է, ը, ե
  - 4) է, զ, բ, ա, ե, ը, զ, դ

27

**Խոսքերից ո՞րը Լտոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի նշված հերոսներից որինն է:**

- |   |   |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. «Այդ եկեղեցին շիներ ենք մեզի համար, մեր սիրո Աստծուն համար»:</li> <li>2. «Զիս ու սուրս թե հերքի չեկավ, կուտայի քեզի և աղջիկս»:</li> <li>3. «Այն Հռվիաննեսը, ան մեռած է վաղուց: Իսկ հիմա հոս կեցած է վանական մը, զլեթե ծերունի մը, հեռու արքունիքեն ու ամենքեն...»:</li> <li>4. «Իջե՛ք, իջե՛ք, երազներ, իջե՛ք զգո՞ւյշ, երազներ...»:</li> </ol><br><ol style="list-style-type: none"> <li>1) 1-գ, 2-պ, 3-ա, 4-դ</li> <li>2) 1-գ, 2-պ, 3-դ, 4-ա</li> <li>3) 1-դ, 2-պ, 3-գ, 4-ա</li> <li>4) 1-ա, 2-դ, 3-ը, 4-գ</li> </ol> | ա. Ջողավոր<br>բ. Իշխան<br>գ. Իշխանուհի<br>դ. Վաճահայր |
|---|---|

28

**Ո՞ր շարքում Գրիգոր Չոհրասի «Այինկա» նորավեպի հերոսներից չկա:**

- 1) Հուսեփի աղա, Սուլրիկ հանըմ, Հաճի Տյուրիկ
- 2) Հակոբոս, Տիգրանուհի, Վասիլիկ
- 3) Սահակ, Զարդար, Սրաֆիոն Գասպարիչ
- 4) Պերճուհի, Մարտիրոս, Սմբատ

29

**Ո՞ր հատվածն է Պարույր Սևակի «Վարք մեծաց» բանաստեղծությունից:**

- 1) Սերում են ճրանք և այն ծերուկից,  
Որ նախընտրում էր ապրել տակառում:
- 2) Նա օտար իրի ճարակի դիմաց  
Սեր ինքնությունը կովիեց ու կրեց...
- 3) Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,  
Որպեսզի դառնան նոր զորեղություն:
- 4) Դու, որ սայթաքել ու վայր ես ընկել,  
Ընկել ես, սակայն երբեք չես ծնկել...

30

**Ինչո՞վ է ավարտվում Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքը:**

- 1) Տասներկու տարի անց գործնական այցով կրկին գյուղ եկած հերոսը հանդիպում է Խոնարհին, որին ճանաչում է միայն աչքերից:
- 2) Խոնարհը մերժում է ուսուցչի սերը և ամուսնությունը ուրիշի հետ:
- 3) Տարիներ անց Խոնարհը փնտրում և գտնում է իրենց գյուղի նախկին ուսուցչին:
- 4) Մեկ տարով գյուղ՝ ուսուցչության մեկնած երիտասարդը վերադառնում է՝ անավարտ բողնելով սկիզբ առած սիրո պատմությունը:

**31 Ո՞ր պնդումը Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմի վերաբերյալ ճիշտ չէ:**

- 1) Պոեմում բանաստեղծը նկարագրում է պատերազմի հետքերը Կարսից մինչև Վան լընկած ճանապարհին:
- 2) Պոեմի կենտրոնական դեմքը ինքը՝ զինվոր բանաստեղծն է:
- 3) Պոեմը սկսվում է պատերազմ մեկնող երիտասարդ կամավորների ուրախ տրամադրությամբ:
- 4) Պոեմում կովի որևէ դրվագ անմիջականորեն չի ներկայացվում:

**32 Ո՞ր տարրերակում փոխաբերություն չկա:**

- 1) Զրերն են անվերջ միզում հեկեկում,  
իմ սիրտն է լալիս կարոտով անհուն:
- 2) Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,  
Նախ՝ կյա՛նքը, վերջը՝ լացող մ'իր վրան:
- 3) Զյունն էլ արևի ջահել համբույրից  
Ուրախ լալիս է դաշտերի վրա:
- 4) Սարի հետևում շողերը մեռան.  
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ:

**33 Նախադասություններից քանիսու՞մ կետադրական սխալ կա:**

- Բոլորն արդեն գիտեին՝ պատվավոր հյուրը ժամանում է, և պատրաստվում էին ըստ պատշաճի դիմավորելու նրան:
- Միակ ուղևորը, որը լրելյացն նստած լաստանավի աջ եղրին, մի ձեռքով խաղում էր կապույտ կոհակների հետ, նկարիչ Փանոս Խորենացյանն էր:
- Տասներեքերորդ դարում՝ օրըստօրե փրթող Անի քաղաքում, ապրում էր մի իշխան՝ Անանիա անունով:
- Փոքրիկներից ութ-ինը քայլ հեռու՝ հինավորց տան շեմին, նստած էր մի երիտասարդ կին՝ գույնզգույն զգեստով. նա այդ երեխաների մայրն էր:

**34 Տրված գոյականներից քանի՞սն ունեն հոլովական զուգածնություն.**

գալուստ, հույս, այուն, արյուն, տեր, ծնունդ, տալ, սկեսուր, թոնիր, սկեսրայր:

**35 Հովհաննես Թումանյանի «Գիքորը» պատմվածքի վերաբերյալ պնդումներից քանիսու՞մ սխալ չկա:**

- Որդուն քաղաք տանելով՝ Համբոն մեծ հույսեր էր կապում նրա հետ, մինչդեռ քաղաքում ձրի ծառայող Գիքորն ինքն էր կարոտ հարազատ մեկի օգնության:
- «Գիքորը» պատմվածքի որոշ դրվագներ վերցված են հենց իր՝ Թումանյանի կյանքից:
- Գիքորի համագյուղացիները, հանդիպելով նրան քաղաքում, չեն կարողանում նրան համոզել և իրենց հետ գյուղ տանել:
- Պատմվածքում ներկայացվում է հայկական գյուղի սոցիալական ծանր դրությունը:

36

### Տրված բառերից քանիսո՞ւմ է գրվում Ա.

ա-պարփակ, ա-փույթ, ա-պատկառ, ա-քիծ, Մա-վել, բա-բեր, ա-պաճոյճ, ա-քիոն, ա-պայման, բա-քիո, ա-բրոս, հա-պատրաստից:

37

### Տրված հատվածում քանի՞ հատկացուցիչ կա:

Սիջանցքի երկար, կոշտ ու կոպիտ տաշված դրները ձեղնահարկի տարրեր հատվածներն էին տանում, ու թեև լույսի ոչ մի ճառագայթ անմիջաբար ներս չեր թափանցում, միջանցքի այդ հատվածում այնքան էլ մութ չեր. տարրեր կողմերում դեպի դուրս բացվող նեղ լուսամուտներ կային:

38

### Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ *տար(ա)*- նախածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).

դժբախտաբար, կուսակցություն, կցկոտոր, հանքափոր, ձևական, կետադրություն, ուղերեռ, զիրանալ, երկսեռ, կարգապահ:

39

### Նշել ատորոգելի երկրորդականով նախադասությունների համարները:

1. Լավ ընկերը նա չէ, ով ամեն ինչում իր շահն է հետապնդում:
2. Սուայժմ այն է հասկացել միայն,  
Որ ինքը մեծ ու աններելի սխալ է գործել:
3. Ես նա եմ, հենց նա,  
Ով մարդկանց մերժել չի կարողանում:
4. Այդ ո՞վ է ասել՝ նորից են սիրում:
5. Այստեղ էականն է այն, որ դու մեզ հետ ես:
6. Այս պահին գլխավորն այն է, որ մենք չդավաճանենք ինքներս մեզ:

40

### Նշել այն հատվածների համարները, որոնցում պակասավոր բայ չկա:

1. Վառվում է մոմը դողդոց փայլերով  
Հեռու անկյունում,  
Ելնում ես անխոս, հպարտ քայլերով,  
Մահապարտի պես այնտեղ ես գնում:
2. Քոլոր հույսերին օրոր է ասում,  
Օրոր է ասում,  
Քարբախուն սիրտս գրկել է ուզում.  
Անխար խնդրություն ունեն երազում:
3. Ուսկեհանդերձ եկար և միգասքող,  
Տխուրաչյա՛ աշուն, սիրա՛ծ աշուն:  
4. Տեսն՞ում ես՝ որքան, որքան արագ  
Անցնում են բոլորն ու դառնում հուշ:  
5. Զկան օրերն ահարկու,  
Զկա ժամ ու ժամանակ,  
Ուրվական ենք մենք երկու  
Սիշտ իրար հետ, միշտ մենակ:

41

### Նշել այն բառերի համարները, որոնցում մեկից ավելի հնչյունակություն կա.

1. նախատրամադրել, 2. ծխամոլ, 3. լուսազգայուն, 4. նրբահյուս, 5. ջրվեժ,  
6. մտայնություն, 7. գարեջրատուն, 8. խառնամուսություն, 9. կանխադրույք:

42

## Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը սխալ է բացատրված.

1. զիսին տալ – ճնշել, 2. գուտնայի տակ պարել – հարսանիքի մասնակցել,
3. դաս առնել –ուսուցչություն անել, 4. դուռը ցույց տալ – վոնդել, 5. դափնիների վրա հանգստանալ – այլևս չառաջադիմել, 6. ծովիսը քամուն տալ – օջախ վառել:

43

## Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարրերակների համարները:

*Հասկանալի էր, որ նման պայմաններում ինձ տրված չէր հանգիստ հոգով գրաղվել իմ գործով. զգում էի, որ իմ նյարդերը սկսում էին բողոքել, բացի դրանից, օրիորդը աստիճանաբար անտանելի էր դառնում ինձ համար:*

1. **նման** – կապ, **ինձ** – անձնական դերանուն, տրական հոլով
2. **գրաղվել** – անորոշ դերբայ, չեզոք սեռ, **գործով** – գոյական, գործիական հոլով
3. **զգում** էի – դիմավոր բայ, սահմանական եղանակ, **բացի** – կապ, երկդրություն
4. **աստիճանաբար** – վերաբերական, **համար** – կապ, հետադրություն
5. **դառնում** էր – անկանոն բայ, անկատար անցյալ, **ոք** – ստորադասական շաղկապ

44

## Դասավորել համարները այն հերթականությամբ, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:

1. Հետագայում խաղերը տեղափոխվել են Հռոմ, ապա՝ կրկին Հունաստան, որոշ տիրակալների օրոք ձեռք բերել նախկին հնչեղությունը կամ անտեսվել: Խախտվել է անցկացման ժամանակացույցը, ինչպես Ներոնի օրոք, որը նաև հրամայել է ջարդել նախորդ բոլոր հաղթողների արձանները, ավելացրել նոր՝ երգիչների մրցույթ, որի հաղթողն ինքն է եղել, զավել է մարտակառքի մրցության հաղթողի պսակը, քանի որ եղել է միակ մասնակիցը: Ասում են՝ երկու անգամ ընկել է մարտակառքի մինչև եզրագծին հասնելը:
2. Անցկացվել են չորս տարին մեկ անգամ սրբազն Օլիմպոսում՝ Ջրոնիոն լեռան ստորոտում, և քիչ-քիչ ընդարձակվել են դրանց ընդգրկման աշխարհագրական սահմանները՝ ներառելով նորանոր կղզիների մարզիկների: Քառասուններորդ խաղերից սկսած՝ մասնակցության բույտվություն են ստացել փոքրասիական և հարավիտավական գաղութների հույնները. բարբարոսների ներկայացուցիչները կարող էին լինել սուլ հանդիսատես:
3. Խաղերի արդյունքները գրոյացվել են ապաշնորհ բռնակալի մահից հետո, ապա արգելվել ընդհանրապես, բայց ուշագրավ է մի բան. մարմարյա սալիկի վրա արձանագրված վերջին հաղթողի անունը Վարազրատ Արշակունի արքայի անունն է (գահակալել է 374-378 թթ.), որը 394-ի խաղերում հաղթել է կռվամարտում: Մեր օրերում դրանք մարզական ամենազգվածային միջոցառումներից են:
4. Եթե հավատանք հիմ հունական հաշվարկներին, 394 թ. հռոմեական կայսր Թեոդոսիոս Առաջին Մեծի կողմից արգելված համահունական օլիմպիական խաղերը եղել են քվով 293-րդը: Օլիմպիական խաղերը հիմնադրվել են Զևս աստծու պատվին և դարձել ամենանշանավորը համահունական բոլոր խաղերի մեջ:

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ք **Ճիշտ է, Սխալ է, Չգիտե՞ս** տարրերակներից որևէ մեկը:

1. **Ես իմքս, դու իմքդ, մա իմքը** կապակցությունների երկրորդ բաղադրիչները բացահայտիչներ են:
2. **Այսրան, այլրան, այնրան** ցուցական դերանունները գործածվում են թե՛ որպես գոյականի, թե՛ որպես բայի լրացում:
3. **Ո՞ր,քանի՞՛** հարցական դերանուններից **-երորդ** ածանցով կազմվում են թվականներ:
4. **Ոչ ոք** դերանունը հոլովվում է՝ ստանալով **ու** հոլովիչ:
5. **Ինչ-որ** անորոշ դերանունը նախադասության մեջ հանդես է գալիս իբրև որոշիչ:
6. **Այս, այդ, այն** ցուցական դերանունները նախադասության մեջ կարող են մատնանշել և՝ առարկայի հատկանիշ, և՝ առարկա:

## Բ մակարդակ

46

Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ.

- 1) դեմ (հանդիման), տարուց (տարի), ի (դեպ), Սանկտ (Պետերբուրգ)
- 2) հանել (բերել), ոտք (ոտքի), կրակ (ու) բոց, ծափ (ողջույն)
- 3) աջ (ու) ահյակ, կուժ (կոտրուկ), սարն (ի) վեր, ձեռք (ձեռքի)
- 4) գնալ (հասնել), բռպե (առ) բռպե, առոք (փառոք), ալ (կարմիր)

47

Ո՞ր շարքում մեծատառի գրության սխալ կա.

- 1) Մարոկկոյի Թագավորություն, Հարյուրամյա պատերազմ, Հայաստանի հանրապետական կուսակցություն, Հարուն ալ Ռաշիդ
- 2) Մշո Առաքելոց վաճք, Սուրբ Գևորգ Եկեղեցի, Սյունյաց անտառ, Մար Արա Կատինա
- 3) Փոքր Ասիա, Օսմանյան կայսրություն, Վերին Շեն, Շիրակի մարզ
- 4) Վինսենթ Վան Գոգ, Վերին Դվին, Սուրբ Դավար կղզի, Ազգային ժողով

48

Ո՞ր շարքի բոլոր բառերում կամ բառաձևերում է ձայնավորը հնչյունափոխվել բաղաձայնի.

- 1) աղվամազ, ալյակ, ուրվական, մեղվապահ
- 2) բարություն, լիի, առվեզր, կվականչ
- 3) վայրկենապաք, հոգյակ, ձվածեղ, չվացուցակ
- 4) կղզեբնակ, լեզվանի, կատվաձագ, թրվահամ

49

Ո՞ր տարրերակի ընդգծված բառերը կամ բառաձևերը համանուններ չեն:

- 1) **թղի** չիր – մի **թղի** չափ հող
- 2) գրքի **երես – երես** առնել
- 3) **երամակից** բռչուն – ձիերի **երամակից**
- 4) **դասել** հանցագործին – դառը **դասել**

50

Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն չկա.

- 1) **աչքը բաց** – ճարապիկ, երես չունենալ – կեղծել
- 2) **ոտքը կապել** – արգելք լինել, **զուր ծնծել** – սուտ լուրեր տարածել
- 3) **իրար օճիք բաց** չքողնել – իրար կպչել, **ձայն ձայնի տալ** – քվեն տալ ինչ-որ մեկին
- 4) **գլուխը խառը լինել** – որևէ գործով խիստ զբաղված լինել, **ծովային գայլ** – ծովային գործին շատ հմուտ

51

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ չկա:

- 1) Մեծ իմաստաերը գրեց, թե տկարամիտ են այն գլուխները, որոնց թույր կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայրն է շինված:
- 2) Թեև մրցակիցը ուժեղ էր, բայց իր համառության պատճառով մարզիկը կարողացավ հաղթել նրան:
- 3) Գիտնականների՝ տիեզերքի ուսումնասիրությանն ուղղված ջամքերը գերծ են շահադիտական ամեն տեսակի նպատակներից:
- 4) Ժողովուրդը փառաբանում էր ուազմական օդաչուի անօրինական սիրանքը:

52

## Տրված քառերից քանի՞սն են հապավումներ.

Խնայրանկ, արտգործնախարար, տեխնոլոգիա, կազմաժիմ, պետառևուոր, պատրարտուուր, հեռատեսիլ, ֆինանս, աշխարհասփյուո, մանկաբուժութեա:

- 1) ութը
- 2) յոթը
- 3) բուրուրը
- 4) ինը

53

## Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հողի գործածություն կա:

- 1) Մոայլ խորհրդածությունները թույլ չտվեցին գիշերս աչք փակել:
- 2) Աչքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:
- 3) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
- 4) Սեպտեմբերի քսաննեկին հայերս մեծ շուրջ տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:

54

## Ո՞ր շարքի բոլոր ժամանակաձևերն են պարզ դիմավոր ձևեր:

- 1) պիտի դուրս գամ, ուտում-խմում են, վե՛ր կաց, թույլ կտամ
- 2) չեմ զնա, հարգի՛ր, վեր կենայի, պարապեինք
- 3) պիտի վեր կենաս, մի՛ մոռացիր, լաց մի՛ լինիր, կերանք-խմեցինք
- 4) մի՛ զնա, չի կորել, նե՛րս եկ, ձեռք տվեց

55

## Ո՞ր նախադասության մեջ դերանուն չկա:

- 1) Կրակոցից ծառի ճյուղերից ճյուն թափվեց, բայց վառողքը չխանձեց ոչ մի աղվեսի մորքի:
- 2) Անտոնը կրակեց. միսի մեջ տեսա, թե ինչպես աղվեսը գլորվեց:
- 3) Զյունը դեռ չէր հալվել, բայց արևի ջերմությունից արդեն զգացվում էր, որ գարունը բոլորովին էլ հեռու չէ:
- 4) Սի քանի տեղ աղվեսը ուժասպառ ընկել էր, արյունն ավելի շատ էր հոսել, և ճյունի վրա թափվել էին մորթու մազերը:

56

## Ո՞ր շարքի բոլոր վերաբերականներն են հաստատական:

- 1) ահավասիկ, իսկեհսկ, անպատճառ, մանավանդ
- 2) հիրավի, ինչ խոսք, մինչև անգամ, նույնիսկ
- 3) իրավ, անխոս, իսկապես, անտարակույս
- 4) անշուշտ, այնուամենայնիվ, հարկավ, արդարև

57

**Ո՞ր տարրերակում պարագա չկա:**

- 1) Եվ ծլվլաց աշխարհով մեկ  
Լույսը առավոտի:
- 2) Օրը գնաց հավասարվեց  
Հազար տարվա մեռելներին:
- 3) Ես սիրում եմ նստել ամեն իրիկուն  
Պատուհանիս առաջ երկար ժամեր...
- 4) Ինչո՞ւ ապշած են, լճան,  
Ու չեն խայտար քո ալյակը:

58

**Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ (նախադասություն-ները կետադրված չեն):**

- 1) Եվ կտրուկ շուտ գալով տեսավ դեպի իրեն եկող մարդկանց:
- 2) Նրան կանչում էր անտառը խորհրդավոր ձայներով:
- 3) Ծառաները գլխարկները հանած խոնարհեցին մինչև գետին:
- 4) Ես կախարդ եմ ապագան գուշակող:

59

**Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ չկա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նրան մեծ պատիվներով ու շուրջով առաջնորդեցին Աշոտ արքայազնի հոր Գագիկի նատավայրը:
- 2) Միակ մարդը որ կողմնակից էր բյուզանդական կայսեր Կեսարի հրամանին նրա հավատարիմ զինակիցն էր:
- 3) Ասորեստանի թագուհի Շամիրամը լսած լինելով Արայի բոլորին ապշեցնող արտառոց գեղեցկության մասին տոշորվում էր նրան տիրանալու անհագ ցանկությամբ:
- 4) Այդ առեղծվածային դրամները իբրև արծաթյա և ոսկյա բախտավորության խորհրդանիշներ հատուկ կտրվել էին նոր տարվա համար:

60

**Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարոյի:**

- 1) *Արամի պարտության մասին գիտեիմ բոլորը՝ մրցության պահին այնտեղ ներկա եղած մարդիկ:*  
Արամի պարտության մասին գիտեին բոլոր մարդիկ, ովքեր մրցության պահին այնտեղ ներկա են:
- 2) *Ամրող գիշեր մայրն անհամբեր սպասում էր տղայի՝ տուն վերադառնալու:*  
Ամրող գիշեր մայրն անհամբեր սպասում էր, որ տղան տուն վերադառնա:
- 3) *Ուսուցի ներս մտնելուց հետո երեխաների զվարք աղմուկը դադարեց:*  
Հենց որ ուսուցիչը ներս մտավ, երեխաների զվարք աղմուկը դադարեց:
- 4) *Ամենամեծ հայրենասերը իր հայրենիքը երթեր չլրող է:*  
Նա, ով երթեր չի լրում իր հայրենիքը, ամենամեծ հայրենասերն է:

61

## Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:

- 1) Ինչևէ, փաստն այն էր, որ պայքունը միայն թերևակի ցնցել էր շենքը՝ թողմելով այն անվճառ մնա, բայց դժոխային մեքենայի՝ սարսափ առաջացրած պայքունից հրդեհ էր բռնկվել:
- 2) Երբ արդեն ներսում էր, ասաց, որ քաղցած չէ, ուզում է քնել. նա ամեն կերպ ճգնում էր կոահել՝ այդ վատ բանը կատարվել է, թե՞ ոչ:
- 3) Նա, անակնկալի գալով, գրեթե ցնծաց, երբ մի պահ հանկարծ զգաց, որ կարողանում է թղթի վրա մարդկանց դիմագծեր ուրվագծեր՝ անգամ աչքերը փակած:
- 4) Մենելայոսը գրկաբաց ընդունեց եկվորներին և հյուրընկալության հենց առաջին օրը նրանց պատվին մի ճոխ խնջույք կազմակերպվեց, որը ժամեր ան՝ կեսգիշերին, վերածվեց արքշիո գինարբութի:

62

## Ստեղծագործություններից յուրաքանչյուրում պատկերված իրադարձությունները պատմական ո՞ր ժամանակաշրջանին են վերաբերում:

- |                                       |                  |
|---------------------------------------|------------------|
| 1. Խաչատուր Աբովյան, «Վերք Հայաստանի» | ա. 4-րդ դար      |
| 2. Ռաֆֆի, «Սամվել»                    | բ. 5-րդ դար      |
| 3. Դերենիկ Դեմիրճյան, «Վարդանանք»     | գ. 10-րդ դար     |
| 4. Մուրացան, «Գևորգ Մարգարետոսի»      | դ. 1826-1827 թթ. |
- 
- 1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
  - 2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-զ
  - 3) 1-դ, 2-ա, 3-զ, 4-բ
  - 4) 1-զ, 2-ա, 3-բ, 4-դ

63

## Նշված հատկանիշները բանաստեղծական ո՞ր տեսակին են բնորոշ:

*Ութողանի բանաստեղծություն է, որի առաջին տողը նույնությամբ կրկնվում է որպես չորրորդ և յոթերորդ տող, իսկ երկրորդ տողը՝ որպես ութերորդ:*

- 1) գաղել
- 2) սրիոլես
- 3) հայրեն
- 4) սոնես

64

## Միայն արևմտահայերենին բնորոշ քանի՞ քառածն կա տրված հատվածում:

Զմրուխտներով կը ծփա դաշտը անհուն:  
Ծիսը կ'երգե բառած հասկի մ' օրորուն,  
Սինչ իր տակեն ցորյաններու մոլեզին  
Ծովեր կանցնին...

65

## Բառերից քանիս՞ն և արմատի, և ածանցի հնչյունափոխություն կա.

հայրենափրություն, նստաշրջան, երգչախմբային, մրցութային, միջնորդագիր, գիտնական, դատաքննչական, գնացուցակ, վայելչադեմ:

66

## Բառերից քանիսի՞՞ բացատրությունն է սխալ.

առաքել – քայլել, ապսպրել – պատվիրել, քողտիկ – հյուղակ, անըստօյուտ – կասկածելի, քարվանսարա – ուղտերի քարավան, հոմանի – մերկ, աճապարել – շտապել:

67

## Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների համարները:

*Մրտմաշուկ կասկածը և հուսալքությունը, բեմ մտնելու երկյուղը շատ անգամ իմ անքուն զիշերների ուղեկիցն են եղել, սակայն ցավագնորեն զսպել եմ արցունքներսու կուչ եկել:*

1. ուղեկիցն են եղել – բաղադրյալ ստորոգյալ, ցավագնորեն – ձևի պարագա
2. զսպել եմ – պարզ ստորոգյալ, արցունքներս – ուղիղ խնդիր
3. սրտմաշուկ – որոշիչ, կասկածը – ենթակա
4. զիշերների – հատկացուցիչ, կուչ եկել – բաղադրյալ ստորոգյալ
5. իմ – հատկացուցիչ, անքուն – ձևի պարագա

68

## Նշել այն հատվածների համարները, որոնցում մեկից ավելի սոսկածանցավոր բայ կա:

1. Անձիր աշխարհի դժկամ ու դաժան Ուտիների մեջ իմ սերը կորած Ել չորոնես: Մթնում մոլորված՝ Դառը խոհերս գրկեմ, հեկեկամ:
2. Անցած օրերս շարքերով դալուկ Ծողում են ահա և անհետանում, Զգիտեմ՝ կյանքը ինձ ուր է տանում, Ամեն ինչ հարց է, մթին հանելուկ:
3. Կար մի դյութական ուրիշ ժամանակ, Ես բողնում էի օրերս մենակ Եվ այս աշխարհից պլանում հեռու:
4. Այս ցուրտ երկրի անհայտում անհուն Ընկնել և կորչել և ննջել հավես, Ոչնչանալ ու մոռացվել քեզ հետ, Ավերված երազ, հայրենական տուն:
5. Որքան էլ զիշերն ահավոր իջնի, Եվ ուր էլ գնամ գլուխ դնելու, Հարազատ մի հող ես չեմ գտնելու Սև ճանապարհիս օրերում դժնի:

69

## Նշել քվերը՝ ըստ տողերի ճիշտ հաջորդականության:

1. Հավերժաբար իրար կապված և բաժան
2. Առկայծում են կարոտագին, երազում
3. Այն աստղերը՝ որպես մոմեր սրբազն
4. Սեղմ զիշերի գեղագնուր երազում

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ք Ճիշտ է, Սխալ է, Չգիտե՞ս տարրերակներից որևէ մեկը:**

1. Ձեի և շափի պարագաներն արտահայտվում են նյութական իմաստ արտահայտող բոլոր խոսքի մասերով:
2. *Պես* կապով կարող են կազմվել թե՛ ձեի, թե՛ ժամանակի պարագաներ:
3. Բոլոր պարագաները կարող են ունենալ մասնավորող պարագայական բացահայտիչ:
4. Պարագաները ցույց են տալիս գործողության հատկանիշներ և հանգամանքներ:
5. Պարագաներն արտահայտվում են միայն գոյականի հոլովածներով և մակրայներով:
6. Գործողության հետ կապված առարկաները կոչվում են պարագաներ: